**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**6 մայիսի 2017թ.** **N 224-Ա**
**ք. Երևան**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ», «ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՐԴ Լ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ, Մ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ, Տ. ԱՍԱՏՐՅԱՆԻ, Տ.ՄԱՐԻՏԻՐՈՍՅԱՆԻ, Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, Ա.ԳԱԼՍՏՅԱՆԻ, Ա.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Իրավունքի Եվրոպա միավորում», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների և դիտորդներ՝ Լուսինե Բունիաթյանի, Մարատ Կարապետյանի, Գեղամ Պետրոսյանի, Ամալյա Սարուխանյանի, Տոմա Ասատրյանի, Տիգրան Մարիտիրոսյանի, Լուսինե Հովհաննիսյանի, Աննա Գասպարյանի, Արամ Գալստյանի, Արթուր Մաթևոսյանի դիմում-բողոքը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## Պ Ա Ր Զ Ե Ց.

**1. Բողոքաբերների իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը**

«Իրավունքի Եվրոպա Միավորում», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ հասարակական կազմակերպությունների և նրանց դիտորդներ՝ Լ. Բունիաթյանի, Մ. Կարապետյանի, Գ. Պետրոսյանի, Ա. Սարուխանյանի, Տ. Ասատրյանի, Տ. Մարիտիրոսյանի, Լ. Հովհաննիսյանի, Ա. Գասպարյանի, Ա. Գալստյանի, Ա. Մաթևոսյանի 10.04.2017թ. դիմում-բողոքը (ստացվել է 2 օրինակով) Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մուտքագրվել է 2017թ. ապրիլի 13-ին:

Բողոքաբերները բողոքարկում են թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը: Ներկայացված դիմում-բողոքում, մասնավորապես, նշված է, որ

Թիվ 7 տարածքային հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշմամբ մերժվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, «Իրավունքի Եվրոպա Միավորում» հասարակական կազմակերպությունների և դիտորդներ Լուսինե Սերյոժայի Բունիաթյանի, Մարատ Գարեգինի Կարապետյանի, Գեղամ Վլադիմիրի Պետրոսյանի, Ամալյա Արայի Սարուխանյանի, Տոմա Տիգրանի Ասատրյանի, Տիգրան Վարդանի Մարիտիրոսյանի, Լուսինե Ավետիքի Հովհաննիսյանի, Աննա Ավետիկի Գասպարյանի, Արամ Գալստյանի, Արթուր Ջիվանի Մաթևոսյանի դիմում-բողոք(ներ)ով վարչական վարույթի հարուցումը:

1-ին կետում շարադրված է թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումների բովանդակությունը:

«Դիմում-բողոքի քննությանն առնչվող էական փաստերը» 2-րդ կետում նշված է.

«1) Դիմում-բողոքների կապակցության Դիմումատուի ներկայացուցչի կողմից ներկայացվել են միջնորդություններ՝

Ա) թիվ 7 տարածքային ընտրական հաձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված թիվ 7/2, 7/3, 7/8, 7/15, 7/16, 7/39, 7/41, 7/42, 7/43, 7/49 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները զննելու,

Բ) թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված թիվ 7/2, 7/3, 7/8, 7/15, 7/16, 7/39, 7/41, 7/42, 7/43, 7/49 տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեսաձայնագրությունների պատճենները ստանալու և/կամ զննելու:

Գ) թիվ 7/2, 7/3, 7/8, 7/15, 7/16, 7/39, 7/41, 7/42, 7/43, 7/49 տեղամասային հանձնաժողովների անդամներին, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված տեղամասային հանձնաժողովների այլ անդամներին (այն տեղամասերի, որոնց վերաբերյալ ներկայացվել են բողոքներ), ինչպես նաև վերոնշյալ և բողոքներով ներկայացված այլ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը քվեարկության սենյակում և տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերին ներկա գտնված և գրանցամատյանի համապատասխան էջում գրանցված անձանց, որպես վկա հրավիրելու վերաբերյալ:

2) Թիվ 7 տարածքային հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների քննության և/կամ նիստի, ինչպես նաև վիճարկվող որոշման ընդունման վերաբերյալ դիմողները չեն ծանուցվել տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների խախտմամբ:

3) Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի վիճարկվող որոշումը մատչելի չի դարձվել դիմողներին՝ ընդհուպ մինչև 10.04.2017թ. ժամը 17:00 սահմանները: Ընդ որում, որոշումը մինչ այդ պահը փակցված չի եղել հանձնաժողովում որևէ տեսանելի տեղում՝ ի խախտումն ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջների, ինչի վերաբերյալ փաստը ընդունվել է նաև հանձնաժողովի նախագահի կողմից (անհրաժեշտության դեպքում կներկայացվի համապատասխան ապացույց):

4) Վիճարկվող որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվել ներկայացված միջնորդություններ վերաբերյալ:

5) Որոշումը դիմումատուների ներկայացուցչին առձեռն տրամադրվել է միայն 10.04.2017թ. ժամը՝ 17:00 սահմաններում:

Վիճարկվող որոշմամբ ներկայացված դիմում-բողոքներով վարչական վարույթի հարուցումը մերժվել է, իսկ որոշման պատճառաբանական մասում արձանագրվել է հետևյալը.

Ա) Դիմումատուներն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ դիմում-բողոքում չեն վկայակոչում, այլ դիմում-բողոք ներկայացնելով՝ բարձրաձայնում են ՀՀ ընտրական օրենսգրքի կանոնակարգումների ենթադրյալ խախտումներ, որոնք չեն առնչվում իրենց՝ որպես դիտորդների, պատկանող իրավունքին, ուստի և դիմումատուները չեն հանդիսանում դիմում-բողոքով վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտ:

Բ) Հասարակական կազմակերպությունների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված իրավունքներն ամրագրված են ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով և վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն: Որևէ այլ իրավունք ՀՀ ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունները համար նախատեսված չէ: Հետևաբար, հասարակական կազմակերպությունները կարող են ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված իրենց իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը:

Գ) Տիգրան Մարտիրոսյանի, Լուսինե Հովհաննիսյանի, Աննա Գասպարյանի և Արամ Գալստյանի դիմում-բողոքով ներկայացվածն արդեն իսկ գրառված է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանում, ուստի անհրաժեշտ չի համարում դիմումով ներկայացված հաղորդումով սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը:

Դ) Դիմումի ուսումնասիրությամբ հանձնաժողովը պարզել է, որ ներկայացված դիմում-բողոքով որպես սուբյեկտ հանդես է գալիս Լուսինե Բունիաթյանը, սակայն դիմումի բովանդակային մասում նշված է Լուսինե Հովհաննիսյան, որի հաշվառմամբ հանձնաժողովը փաստել է, որ անհասկանալի է, թե նշված սուբյեկտներից ով է հանդիսանում դիմումատու:

Ե) թիվ 7/49 տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին կատարած հարցմամբ պարզվել է, որ բոլոր դիտորդները, ովքեր դիմել են գրանցամատյանում իրենց գնահատականը գրառելու համար, հանձնաժողովի քարտուղարը օրենքով սահմանված կարգով կատարել է գրառում:

Զ) Միևնույն ժամանակ, հանձնաժողովի կողմից որոշմամբ նշվել է, որ Դիմումատու դիտորդներ Իզաբելա Շատոյանի և Մելինե Պետրոսյանի անունից չեն ներկայացվել պատշաճ լիազորագրեր:

Դիմում-բողոքի հիմքերը և հիմնավորումները.

Գտնում ենք, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումն իրավաչափ չէ և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական վարույթի հարուցման մերժումը տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից պատճառաբանվել է դիմումատու դիտորդների և կազմակերպությունների՝ դիմումներում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասում սուբյեկտներ չհանդիսանալու հանգամանքով: Մասնավորապես, տարածքային ընտրական հանձնաժողովը հղում է կատարել ՀՀ ընտրական օրենգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ արձանագրելով, որ յուրաքանչյուր կոնտրետ սուբյեկտի իրավունք է վերապահվում բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանություն:

Այնուհետև հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությանը, համաձայն որի՝ ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին, տարածքային ընտրական հանձնաժողովը որոշել է դիմողների դիմում-բողոք(ներ)ով վարչական վարույթի հարուցումը մերժել:

- Սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ դիմումում վկայակոչված չլինելու հիմքով ՝ վրչական վարույթի հարուման մերժման մասով.

Վիճարկվող որոշմամբ հանձնաժողովը գտել է, որ դիմումատու դիտորդներն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ որևէ փաստ դիմումում չեն վկայակոչել, այլ դիմումներ ներկայացնելով ՝ նկարագրել են ՀՀ ընտրական օրենսգրքի կանոնակարգումների ենթադրյալ խախտումներ, որոն չեն առնչվում իրենց՝ որպես դիտորդների պատկանող իրավունքին:

Անդրադառնալով տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից այս հիմքով վարչական վարույթի հարուման մերժմանը՝ արձանագրենք, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների մի մասով տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունները (անգործությունը) վիճարկվել են նաև դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով, քանի որ դիտորդների կողմից արձանագրած խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում դիտորդի կողմից արձանագրված խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջի մերժումը հանգեցնում է դիտորդի ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սուբյեկտիվ իրավունքների խախտմանը: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ դիտորդի կողմից իր սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ դիմումում վկայակոչված չլինելու հիմքով վարչական վարույթի հարուցման մերժումը իրավաչափ չէ և հակասում է ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ և 67-րդ հոդվածների պահանջներին: Նույն հիմավորմամբ ոչ իրավաչափ է

դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության նույնաբովադակ դիմումի հիման վրա վարչական վարույթի հարուցման մերժումը, քանի որ ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններին վերապահված է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավուքն(այն կազմակերպություններին, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին), որը համապատասխան կազմակերպությունն իրականացնում է իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով: Ցանկացած դեպքում, երբ խախտվում է դիտորդական կազմակերպության հավատարմագրված դիտորդի իրավունքը, անմիջականորեն խախտվում է նաև վերջինիս հավատարմագրած կազմակերպության դիտորդական առաքելության իրավուքնը, քանի որ կազմակերպության դիտորդական առաքելության իրավուքնի իրացումն ուղղակիորեն փոխկապակցված է իր կողմից հավատարմագրված դիտորդների գործունեության հետ:

Ընդ որում, հետաքրքրականն այն է, որ հանձնաժողովը որոշմամբ մի դեպքում վկայակոչել է, որ դիմումատու դիտորդներն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ դիմում-բողոքներում չեն վկայակոչել, միևնույն ժամանակ, մշել է, որ. «դիմումների ուսումնասիրությամբ պարզվում է, որ ըստ դիմումատուների, խախտվել և չի ապահովվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում իրենց գնահատականն արձանագրելու իրավունքը», ինչպիսի պայմաններում, փաստորեն, հանձնաժողովը, դիմում-բողոքների բովանդակության վերաբերյալ որոշմամբ արտահայտել է հակասական դիրքորոշում:

- Դիտորդին և դիտորդական կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու հարցով իրավասուբյեկտության մասով.

Դիտորդին և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությանը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների/անգործության բողոքարկման համար ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով (օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների մասով) վարույթի հարուցման մերժումը հանգեցրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջների խախտմանը: Մասնավորապես, դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ընդհանուր բնույթի ընտրախախտումների (օբյեկտիվ ընտրական իրավունքի) հիմքով դիմում-բողոքների ներկայացնելու իրավունք չունենալու վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի հետևությունը չի բխում ՀՀ Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից: Դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածների դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում:

Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը:

Այս իրավունքն իր բովանդակային ծավալում ներառում է յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը: ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սուբյեկտների և նրանց վերապահված իրավունքների շրջանակի վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանափակ և կամայական մեկնաբանությունը ուղղակիորեն հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 48-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտ-պանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի դրույթների

հետ, քանի որ օրենսդիր մարմին ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց:

Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեկանության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:

- Հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության մասով.

Անդրադառնալով դիմում-բողոք(ներ)ը հասարակական կազմակերպության կողմից ներկայացված լինելու հանգամանքին՝ տարածքային ընտրական հանձնաժողովը գտել է, որ դիմումատու հասարակական կազմակերպություն(ներ)ը սույն դիմումով իրավասու սուբյեկտ չի հանդիսանում, քանի որ հասարակական կազմակերպությունների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված իրավունքներն ամրագրված են ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով և վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն: Որոշմամբ արձանագրվել է նաև, որ որևէ այլ իրավունք ՀՀ ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված չէ: Ելնելով վերոգրյալից՝ տարածքային ընտրական հանձնաժողովը եզրահանգել է, որ հասարակական կազմակերպությունները կարող են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրենց իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը:

Գտնում ենք, որ վերոգրյալ պատճառաբանությամբ վարչական վարույթի հարուցման մերժումը ուղղակիորեն հակասում է ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթներին: Ակնհայտորեն ոչ իրավաչափ է ընտրական հանձնաժողովի փաստարկն առ այն, որ դիտորդական կազմակերպությունը հավատարմագրելու իրավունքից, բացի որևէ այլ իրավունք Ընտրական օրենսգրքի համաձայն չունի: Առաջին հերթին դիտորդական կազմակերպությունն ունի ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք և այս իրավունքի շրջանակներում ունի թե դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման և թե օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք: Դիտորդի սուբյեկտիվ իրավունքների և օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտության վերաբերյալ սույն դիմումում ներկայացված հիմնավորումները հավասարապես կիրառելի են դիտորդական կազմակերպությունների նկատմամբ: Ավելին, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ: Նրանց դիտորդական առաքելությունը հանդիսանում է հանրային գործառույթ, որի նպատակն է ապահովել ընտրությունների թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների պատշաճ իրականացմանը: Վերոնշյալ հանրային իրավական գործառույթի արդյունավետ իրականացումը, ի թիվս այլոց, պայմանավորված է դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտությամբ:

Ավելին, հարկ ենք համարում անդրադառնալ նաև հասարակական կազմակերպության իրավասուբյեկտության հարցին ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրվել է, որ քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից

անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական երկրների ներկա զարգացումների միտումները:

Շեշտվել է նաև, որ. «Ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը: Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում":

ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրվել է նաև, որ վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (,,Actio popularis") առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներր վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի: Միաժամանակ, սահմանադրական դատարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրել է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատահիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է: Այսպիսի դիրքորոշում է ըստ էության արտահայտվել նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրհուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետևաբար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության հարցերին է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խրախուսում են քննության առնել այն հարցը, թե արդյո՞ք դատական վերահսկողության մատչելիությունը պետք է երաշխավորվի նաև այն միավորումների կամ այլ անձանց կամ մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանել կոլեկտիվ կամ համայնքային շահեր:

Թիվ ՎԴ/3275/05/09 գործով ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշմամբ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունների հայցադիմումի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջիններս ակնհայտորեն չունեն հայցադիմումում ներկայացված պահանջներով դատարան դիմելու իրավունք, քանի որ այդ հասարակական կազմակերպությունների իրավունքները, վիճարկվող պահանջներով, չեն խախտվել և չեն շոշափվել: ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշման դեմ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժվել է միևնույն պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանի 30.10.2009թ. որոշմամբ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշման՝ Կազմակերպության բողոքը մերժելու մասը: Կազմակերպության բողոքը բավարարվել է: Որոշման՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժելու մասը, թողնվել է օրինական ուժի մեջ: Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ անհիմն է համարել Դատարանի կողմից «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման հիմքով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունման մերժումը: Դատարանի 24.03.2010թ. վճռով մերժվել է Կազմակերպության հայցն այն պատճառաբանությամբ, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպություններին չի օժտում դատավարական իրավասուբյեկտությամբ:

Նույն գործով կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 01.04.2011թ. որոշմամբ գտել է, որ վիճարկվող դատական ակտը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության կարգավորման նպատակներից, ընդ որում վկայակոչվել է ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-906 որոշումը:

Սակայն, ՀՀ սահմանադրական դատարանն, իր 2012թ. տարեկան հաղորդմամբ անդրադառնալով Վճռաբեկ դատարանի որոշմանը, վերահաստատել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «...հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ նպատակների շրջանակներում է» և արձանագրել, որ «... ՀՀ վարչական դատարանը, նույն կերպ նաև 01.04.2011թ. ՀՀ վճռաբեկ դատարանը, սխալ են մեկնաբանել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության վերաբերյալ՝ վերջիններիս զրկելով իրենց կանոնադրական նպատակներից բխող հարցերի առնչությամբ դատարան դիմելու իրավունքից»:

Տվյալ դեպքում, Դիմումատու կազմակերպության (կազմակերպությունների) կանոնադրական նպատակներից բխում է ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությունը, կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ընտրությունների և հանրաքվեի օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը, այլոց իրավունքների որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությունը:

- Սույն պարագայում, Տարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու չէր կայացնելու վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ վիճարկվող որոշմամբ բերված հիմնավորումներով դիմողների ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով:

Թիվ 7 տարածքային հանձնաժողովի կողմից վարչական վարույթ հարուցելու փուլում դիմում-բողոքում ներկայացված իրավունքների խախտման փաստերը և դրանով պայմանավորված դիմումատուների՝ բողոքարկման սուբյեկտ լինելու հանգամանքի իրավական գնահատականը

չէին կարող հանձնաժողովի քննարկման առարկա դառնալ վարչական վարույթ հարուցելու փուլում: Այդ հանգամանքը հանգեցրել է տարածքային հանձնաժողովի լիազորությունների սահմանազանցմանը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Դիմումատուների նյութական իրավունքների խախտումների առկայության կամ բացակայության փաստին իրավական գնահատական կարող է տրվել միայն վարչական մարմնի կողմից գործի ըստ էության քննության փուլում:

Տարածքային ընտրական հանձնաժողովը, ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերին խիստ սահմանափակ և ՀՀ Սահմանադրության 48-րդ և 50-րդ հոդվածների պահանջներին հակասող մեկնաբանություն տալու արդյունքում, խախտել է նաև դիմողների՝ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքը և զրկել նրանց վարչական մարմնի կողմից իրենց առնչվող գործով քննության իրավունքից:

- Հանձնաժողովին ներկայացված միջնորդությունները վերջինիս կողմից քննելուց հրաժարվելու և դրա հետևանքով վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պարտադիր պահանջների խախտման հիմքով:

Վիճարկվող որոշումը ոչ իրավաչափ է նաև՝ դիմողների կողմից տարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացված միջնորդությունները վերջինիս կողմից քննելուց հրաժարվելու և դրա հետևանքով վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պարտադիր պահանջների խախտման հիմքով, Այսպես՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի ուժով վարչական մարմինը, վարույթի մասնակիցների միջնորդությամբ որպես վկա հրավիրում և լսում է այն անձանց ցուցմունքները, որոնց կարող են հայտնի լինել տվյալ գործին վերաբերող տեղեկություններ: Նույն օրենքի 45-րդ հոդվածի Վարչական մարմինը, անհրաժեշտության դեպքում, կարող է նշանակել նաև ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննում, որին կարող են ներկա գտնվել վարույթի մասնակիցները: Միաժամանակ նույն օրենքի 75-րդ հոդվածին համապատասխան՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված է նաև վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքը, ըստ որի վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմի ներկայացված միջնորդությունների չքննարկումը (վիճարկվող որոշմամբ միջնորդություններին որևէ անդրադարձ չի կատարվել) հանգեցրել է դիմողների ՝ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքի խախտմանը՝ դուրս գալով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից:

Հանձնաժողովի կողմից որոշմամբ արձանագրված լիազորագրի բացակայության և դիմումատուի ինքնության պարզման անհնարինության մասով.

Դիմումի ուսումնասիրությամբ հանձնաժողովը պարզել է, որ ներկայացված դիմում-բողոքով որպես սուբյեկտ հանդես է գալիս Լուսինե Բունիաթյանը, սակայն դիմումի բովանդակային մասում նշված է Լուսինե Հովհաննիսյանի, որի հաշվառմամբ հանձնաժողովը փաստել է, որ անհասկանալի է, թե նշված սուբյեկտներից ով է հանդիսանում դիմումատու, միաժամանակ, հանձնաժողովի կողմից որոշմամբ նշվել է, որ դիմումատու դիտորդներ Իզաբելա Շատոյանի և Մելինե Պետրոսյանի անունից չեն ներկայացվել պատշաճ լիազորագրեր:

Տվյալ դեպքում, ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր: Եթե դիմումին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա ընտրական հանձնաժողովի համալրման համար սահմանում է ողջամիտ

ժամկետ: Նշված ժամկետում սխալները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին:

Սույն դեպքում տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ուղղակիորեն խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, քանի որ ներկայացված դիմումին կից փաստաթղթերի ոչ ամբողջական ցանկի վերաբերյալ դիմումատուին ծանուցելու պարտականությունը հանձնաժողովի կողմից պարզապես չի կատարվել: Դիմումի հիման վրա վարչական վարույթի հարուցումը մերժվել է առանց բացակայող փաստաթղթերի վերաբերյալ դիմումատուին ծանուցելու և փաստաթղթերը համալրելու նպատակով ողջամիտ ժամկետ տրամադրելու: Դիմողը ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի և «Վարչարարության հմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների (այդ թվում՝ ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքի) ակնհայտ և կոպիտ խախտմամբ զրկվել է տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների/անգործության բողոքարկելու, ինչպես նաև իր իրավունքների պաշտպանության արդյունքվետ միջոցի իրավունքից:

Նման պայմաններում, եթե հանձնաժողովը գտնում էր, որ ներկայացված փաստաթղթերում, բացակայում է որևէ փաստաթուղթ կամ օրինակ դիմում-բողոքում հանձնաժողովի դիտարկմամբ տեղի է ունեցել որևէ վրիպակ դիմումատուի անվան վերաբերյալ, ապա հանձնաժողովը կարող էր և պարտավոր էր օրենքով սահմանված կարգով տեղեկացնել այդ մասին դիմումատուին, վերջինիս տրամադրելով ողջամիտ ժամկետ, համապատասխան դիմում-բողոքի համալրման նպատակով:

Հանձնաժողովի կողմից հանձնաժողովների նախագահներին հարցումներ կատարելու և որոշակի փաստական տվյալներ ճշտելու իրավաչափության մասով.

Ինչ վերաբերում է թիվ 11-Ա որոշման հիմնավորմանն առ այն, որ թիվ 7/49 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահներին (անհասկանալի է, թե ինչ նախագահների մասին է գնում խոսքը, եթե թիվ 7/49 տեղամասային ընտրական հանձնաժողովում եղել է մեկ նախագահ) կատարած հարցմամբ պարզվել է, որ այն դիտորդները, ովքեր դիմել են գրանցամատյանում իրենց գնահատականը գրառելու պահանջով, հանձնաժողովի քարտուղարն օրենքով սահմանված կարգով կատարել է գրառումը, ինչն էլ, ըստ էության, դրվել է դիմում-բողոքների մերժման որոշման հիմքում, ապա հարկ ենք համարում արձանագրել, որ տարածքային ընտրական հանձնաժողովը դրսևորել է ակնհայտ կողմնակալ վերաբերմունք՝ դիտորդի կողմից գրանցամատյանում իր գնահատականը արձանագրելու պահանջի ներկայացված չլինելու հանգամանքը հաստատելով միայն համապատասխան հանձնաժողովների նախագահների բացատրություններով, հրաժարվելով փաստորեն այլ ապացույցներ ձեռք բերելու, այդ թվում համապատասխան գրանցամատյանները պահանջելու և ուսումնասիրելու, այդ փաստական տվյալները տիրապետող անձանց որպես վկաներ հրավիրելու և հարցաքննելու գործողություններիկատարումից, դրանով իսկ խախտելով «Վարչարարության հմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ամրագրված վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պահանջները:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հանձնաժողովը նշել է որ, Տիգրան Մարտիրոսյանի, Լուսինե Հովհաննիսյանի, Աննա Գասպարյանի և Արամ Գալստյանի դիմում-բողոքներով ներկայացվածն արդեն իսկ գրառված է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանում, ուստի անհրաժեշտ չի համարում դիմումով ներկայացված հաղորդումով սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը:

Փաստորեն, ըստ որոշման ստացվում է, որ գրանցամատյանում գրառումները կատարվել են դիմում-բողոքները ներկայացվելուց հետո, այսինքն՝ մինչ դիմում-բողոքների ներկայացումը, գրանցամատյաններում որևէ գրառում առկա չի եղել և դրանք հետագայում լրացվել են:

Տվյալ դեպքում, գտնում ենք, որ իրավական գնահատման է ենթակա ինչպես ինքնին դիմում-բողոքները ներկայացվելուց հետո գրանցամատյանում գրառում կատարելու գործողությունը, այնպես էլ այն հարցը, թե դիմում-բողոքներից հետո գրանցամատյանում գրառում կատարելը, այնպես էլ այն հարցը, թե դիմում-բողոքներից հետո գրանցամատյանում գրառում կատարելը,

բացառում է արդյոք տեղամասային հանձնաժողովի կողմից, այնուամենայնիվ, խախտում թույլ տալու փաստը, թե ոչ:

Ավելին, քննարկման առարկա չի դարձվել դիտորդ Մարատ Գարեգինի Կարապետյանի կողմից՝ գրանցամատյանում իր գնահատականը չգրառելու փաստը:

Հանձնաժողովի կողմից Դիմումատուներին նիստի վերաբերյալ չտեղեկացնելու, ինչպես նաև որոշման վերաբերյալ դիմումատուներին չիրազեկելու մասով.

Դիմումատուները չեն ծանուցվել տարածքային ընտրական հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին:

Դիմողներին տարածքային ընտրական հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին չծանուցելու հետևանքով խախտվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Հանձնաժողովի վերոնշյալ գործողությունները ուղղակիորեն հանգեցրել են նաև գործի փաստական հանգամանքների բազմակողանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովման օրենսդրական պահանջի խախտմանը:

Այս առումով հարկ է նշել, որ նույնանման փաստական հանգամանքների նկատմամբ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ցուցաբերվել է տարբերակված մոտեցում: Մասնավորապես՝ տարածքային ընտրական հանձնաժողովների մի մասը հրավիրել և ծանուցել է դիմումատուին հանձնաժողովի կայանալիք նիստի մասին և քննարկել է ներկայացված բողոք-դիմումները ըստ էության, իսկ որոշները՝ ոչ, ինչով և խախտվել է «Վարչարարութան հմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Ավելին, որոշման բովանդակությունից պարզ է դառնում, որ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվել է վարչական վարույթ՝ առանց վարույթի մասնակիցներին ծանուցելու, որի արդյունքում խախտվել է դիմողների լղված լինելու և պատշաճ վարչարարության իրավունքները:

Բացի այդ, հարկ է նշել, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ տարաքծային ընտրական հանձնաժողովում դիմումի քննարկման մասին դիմումատուն համարվում է ծանուցված դիմումի քննարկման և ժամի մասին հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ծանուցում փակցնելու միջոցով, իսկ եթե դիմումում նշված է հեռախոսահամար, ապա դիմումատուն տեղեկացվում է նաև այդ միջոցով, ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

Ընդ որում, հարկ ենք համարում նշել նաև, որ հանձնաժողովի կողմից կայացված որոշումը, թեև ինչպես հետևում է որոշման բովանդակությունից, կայացվել է 07.04.2017թ., այնուամենայնիվ, որոշման վերաբերյալ դիմումատուները տեղեկացվել են օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից: Տարածքային ընտրական հանձնաժոովի ընդունած վարչական ակտը փակցվում է տարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում, ակտն ընդունելուց հետո ՝ 24 ժամվա ընթացքում:

Տվյալ դեպքում, որոշումը, դիմումատուներին առձեռն հանձնվել է միայն 10.04.2017թ. ժամը՝ 17:00-ի սահմաններում, իսկ մինչ այդ նույնիսկ փակցված չի եղել տարածքային ընտրական հանձնաժողովի գտնվելու վայրի որևէ տեսանելի հատվածում:

3. Պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ Խնդրում ենք

1. Անվավեր ճանաչել թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը:

2. Ձեռնարկել միջոցներ՝

ա) վերոգրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

բ) խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

գ) համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ:

3. Հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության.

4. Քննարկել և գնահատել հիշյալ խախտումների ազդեցությունը նշված տեղամասերում քվեարկության արդյունքների վրա և համապատասխան տեղամասերում նշանակել վերավեարկություն կամ անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունները և նշանակել վերաքվեարկություն:»

**<u>2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը</u>**

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով դիմում-բողոքը և լիազորագրերը, ինչպես նաև կից ներկայացված փաստաթղթերը, պարզել է, որ դիմում-բողոքը ներկայացված է ներկայացուցիչների միջոցով և ստորագրված է լիազորված ներկայացուցիչ Դավիթ Գյուրջյանի կողմից: Դիմում-բողոքին կից բողոքաբեր դիտորդ՝ Լուսինե Հովհաննիսյանի և Արամ Գասպարյանի կողմից լիազորագրեր չէին ներկայացվել, Լուսինե Հովհաննիսյանի կողմից տրված լիազորագիրը ներկայացվեց նիստի ժամանակ, իսկ Արամ Գասպարյանի կողմից տրված լիազորագիր չներկայացվեց:

ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանված է.

«Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:»:

Լիազորագրի ձևին, բովանդակությանը, ժամկետներին, դադարելու հիմքերին և հետևանքներին վերաբերող նորմերը սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-325-րդ հոդվածներում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն.

«Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև ***սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված*** դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: …»:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիտորդ՝ Արամ Գասպարյանի մասով դիմումը չի քննարկում և մերժում է վարչական վարույթի հարուցումը:

2. Դիմում-բողոքում շարադրված են թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված այնպիսի հանգամանքներ, որոնք առնչվում են 2017թ. ապրիլի 2-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրվան և վերաբերում են առանձին տեղամասերի:

3. Ներկայացված դիմում-բողոքում հենց բողոքաբերներն են փաստում, որ խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Նշվածից ակնհայտ է, որ դիտորդների ՀՀ ընտրական օրենսգրքով իրենց վերապահված իրավունքն իրացրել է՝ խախտման մասին գնահատականը ներկայացրել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին և դրանք գրառվել են տեղամասային

ընտրական հանձնաժողովների գրացամատյաններում, հետևապես նշված դեպքերում դիտորդի սուբյեկտիվ իրավունքի խախտում առկա չէ:

4. Դիմում-բողոքում բողոքաբերներն անդրադարձել են վիճարկվող որոշմամբ դիմումատու հանդիսացողների իրավասուբյեկտության հանգամանքին: Մասնավորապես, դիմում-բողոքում նշված է. «Վիճարկվող որոշմամբ հանձնաժողովը գտել է, որ դիմումատու դիտորդներն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ որևէ փաստ դիմումում չեն վկայակոչել, այլ դիմումներ ներկայացնելով ՝ նկարագրել են ՀՀ ընտրական օրենսգրքի կանոնակարգումների ենթադրյալ խախտումներ, որոն չեն առնչվում իրենց՝ որպես դիտորդների պատկանող իրավունքին:

Անդրադառնալով տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից այս հիմքով վարչական վարույթի հարուցման մերժմանը՝ արձանագրենք, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների մի մասով տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունները (անգործությունը) վիճարկվել են նաև դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով, քանի որ դիտորդների կողմից արձանագրած խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

Վերը նշվածը որպես ենթադրյալ խախտում գնահատելու համար որպես իրավական հիմք վկայակոչվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասը, համաձայն որի՝

«Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի վերլուծությունը թույլ է տալիս փաստելու, որ տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու որևէ գնահատական (ենթադրյալ խախտում)՝ միայն հետևյալ պայմանների պահպանմամբ.

ա) **ներկայացվել է** գնահատականը (ենթադրյալ խախտումը) տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու **պահանջ**,

բ) նման պահանջ է ներկայացրել **հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը**,

գ) պահանջ ներկայացնողը գտնում է, որ **տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում**,

դ) քվեարկության կարգի խախտումը տեղի է ունեցել **քվեարկության ընթացքում:**

Միայն վերը թվարկված բոլոր պայմանների պահպանման դեպքում է տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջ ներկայացնող անձի գնահատականը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ վիճարկվող որոշմամբ գրանցամատյաններում խախտումները (խախտումների վերաբերյալ գնահատականները) չգրանցելու հանգամանքը որպես դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտում չդիտելը իրավաչափ է այն դեպքում, երբ վկայակոչված չէ դիտորդի կողմից գրառում կատարելու փաստը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիտորդի կողմից արձանագրած խախտումը կամ խախտման վերաբերյալ գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում չգրանցելը թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը պետք է գնահատեր որպես ոչ իրավաչափ անգործություն՝ միայն վերը թվարկված բոլոր պայմանների միաժամանակյա ապահովման դեպքում, այնինչ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրած դիմումների ուսումնասիրությամբ փաստվում է, որ չի ապահովվել դիտորդի կողմից իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջ ներկայացնելու պայմանը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն.

«Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել:...»:

Դիմումատուները ոչ տարածքային ընտրական հանձնաժողով, և ոչ էլ Կենտրոնական ընտրական հանձնաժողով չեն ներկայացրել դիմում-բողոքի վերը նշված պնդումը հաստատող և ապացուցողական նշանակություն ունեցող որևէ ապացույց:

ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումում պետք է հստակ սահմանված լինի դիմումատուի պահանջը, բերված լինեն դիմումատուի հիմնավորումները և կցված լինեն հնարավոր ապացույցները:

Ինչպես թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովին, այնպես էլ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմում-բողոքներում ներկայացված են միայն դատողություններ՝ գրանցամատյանում գնահատականները չգրառելու վերաբերյալ և որևէ փաստ, որևէ ապացույց առ այն, որ դիմումատու դիտորդները պահանջել են գրառել իրենց գնահատականները, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովները դրսևորել են անգործություն, վարչական վարույթի նյութերում առկա չէ այն դեպքում, երբ ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն է, որ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Հարկ ենք համարում նշել, որ վիճարկվող որոշմամբ փաստվում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը պարզել, որ ներկայացված դիմում-բողոքով, որպես սուբյեկտ հանդես է գալիս Լուսինե Բունիաթյանը: Այսինքն՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը դիտորդի Լուսինե Բունիաթյան մասով գնահատել է, որ խախտվել է վերջինիս Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ իրավունքը՝ դիտորդի կողմից իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջ ներկայացնելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը գրանցամատ-յանում չի արձանագրել պահանջ ներկայացնող անձի գնահատականը:

Միաժամանակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թեև վիճարկվող որոշմամբ ուղղակի չի նշվել, թե որ դիմումատուների մասով է կիրառելի դիրքորոշումն առ այն, որ «...դիմումատու դիտորդներն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ դիմումում չեն վկայակոչել», այդուհանդերձ որոշմամբ նշված էական փաստական և իրավաբանական հանգամանքներից պարզ է, որ դրանք, բացառությամբ՝ Լուսինե Բունիաթյանի, վերաբերում են դիտորդներ Մարատ Կարապետյանին, Գեղամ Պետրոսյանին, Ամալյա Սարուխանյանին, Տոմա Ասատրյանին, Տիգրան Մարիտիրոսյանին, Լուսինե Հովհաննիսյանին, Աննա Գասպարյանին, Արթուր Մաթևոսյանին և «Իրավունքի Եվրոպա միավորում», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպություններին:

5. Դիմում-բողոքում նշվում է Իզաբելա Շատոյանի և Մելինե Պետրոսյանի կողմից լիազորագրեր չներկայացնելու փաստը, և դրա վերաբերյալ բողոքաբերների դատողությունները, սակայն վերջիններս սույն դիմում-բողոքով բողոքաբերներ չեն հանդիսանում:

6. Դիմում-բողոքում նշված. «Հանձնաժողովի կողմից Դիմումատուներին նիստի վերաբերյալ չտեղեկացնելու, ինչպես նաև որոշման վերաբերյալ դիմումատուներին չիրազեկելու մասով» ներկայացված դատողությունների կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Տարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի քննարկման մասին դիմումատուն համարվում է ծանուցված դիմումի քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ծանուցում փակցնելու միջոցով, իսկ եթե դիմումում նշված է

հեռախոսահամար, ապա դիմումատուն տեղեկացվում է նաև այդ միջոցով, ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:»:

Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը ստացված դիմումների քննարկման օրվա և ժամի մասին ծանուցում է փակցրել բոլորի համար տեսանելի տեղում, սակայն այդ մասին դիմումում նշված է հեռախոսահամարով զանգի կամ կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով չի տեղեկացրել դիմումատու դիտորդ Լուսինե Բունիաթյանին, ինչպիսի հանգամանքն ընդունում է թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը:

Իսկ ինչ վերաբերում է մյուս դիմումատուներին, որոնք հեռախոսահամարով զանգի կամ կարճ հաղորդագրության միջոցով չծանուցելու վերաբերյալ դատողությանը, ապա այդ կապակցությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է.

ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Տարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի քննարկման մասին դիմումատուն համարվում է ծանուցված դիմումի քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ծանուցում փակցնելու միջոցով, իսկ եթե դիմումում նշված է հեռախոսահամար, ապա դիմումատուն տեղեկացվում է նաև այդ միջոցով, ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:»:

Ի թիվս այլ առանձնահատկությունների, օրինակ՝ դիմումի (բողոքի) քննարկման մասին դիմումատուին ծանուցելու, ընտրությունների ժամանակահատվածում վարչական վարույթի կասեցումն արգելելու կանոնակարգումների, ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի իրականացման առանձնահատկություններից է վարչական վարույթի հարուցումը մերժելու իրավասությունը: Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ ընտրական հանձնաժողովները չունեն օրենքով սահմանված պարտավորություն՝ վարույթ չհարուցելու կամ վարույթի հարուցումը մերժելու դեպքում ծանուցելու դիմումատուին դիմումի քննարկման օրվա և ժամի մասին, քանի որ դիմումի քննարկում, ըստ էության, տեղի չի ունենում: Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ և 49-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված կանոնակարգումներից շատ հստակ երևում է, որ դիմումատուն ծանուցվելու, հանձնաժողովի նիստում իր դիմումի քննարկմանը մասնակցելու, հիմնավորումներ ներկայացնելու, ելույթ ունենալու իրավունք ունի միայն վարչական վարույթի հարուցման դեպքում:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ գործող Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն ընտրական հանձնաժողովները «որոշման վերաբերյալ դիմումատուներին իրազեկելու մասով» որևէ պարտավորություն չունեն:

Վերոգրյալի հաշվառմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովում, վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման նախագիծ ներկայացված լինելու պարագայում, դիտորդներ Մարատ Կարապետյանին, Գեղամ Պետրոսյանին, Ամալյա Սարուխանյանին, Տոմա Ասատրյանին, Տիգրան Մարիտիրոսյանին, Լուսինե Հովհաննիսյանին, Աննա Գասպարյանին, Արթուր Մաթևոսյանին և «Իրավունքի Եվրոպա միավորում», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ծանուցելու օրենքով սահմանված որևէ պարտավորություն հանձնաժողովը չի կրել:

7. Դիմում-բողոքում բողոքաբերները ներկայացրել են ընդհանուր բնույթի դատողություններ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտության վերաբերյալ, մասնավորապես, նշում են, որ «Դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածների դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում:»: Նաև նշվում է. «Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:»:

Վերը նշված դատողությունների համար որպես իրավական հիմք դիմումատուները վկայակոչում են ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտ-պանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածը՝ շեշտադրելով օրենսդիր մարմին ընտրելու և այդ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն՝

«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:»:

Ընտրական գործընթացում քաղաքացու դրությունը դրսևորվում է «ընտրողի իրավական կարգավիճակում»: Ընտրողի իրավական կարգավիճակի բովանդակությունը բխում է նրա իրավունքից՝ ընտրելու համապատասխան ընտրությունների ժամանակ, որոշվում է ընտրական օրենսդրությամբ սահմանված որոշակի գործողություններ կատարելու իրավունքներով, որոնք կապված են նախընտրական քարոզչությանը, քվեարկությանը մասնակցելու հետ և այլն: Ընտրողի իրավունքները կարող են ընդարձակվել կոնկրետ դեպքում վերջինիս կողմից ընտրական գործընթացում կոնկրետ գործառույթ կատարելիս՝ որպես թեկնածու, վստահված անձ, հանձնաժողովի անդամ, դիտորդ և այլն, որոնք սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքով:

**Յուրաքանչյուր ոք** ընտրական իրավահարաբերություններում, ելնելով օրենսդրությամբ սահմանված հստակ չափորոշիչներից և պահանջներից, հանդես է գալիս հստակ սահմանված որևէ կարգավիճակով (ընտրող, թեկնածու, դիտորդ և այլն), ընդ որում նշված կարգավիճակով հանդես եկող անձն օժտված է հստակ սահմանված իրավունքներով և պարտականություններով: ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով երաշխավորված ընտրելու իրավունքի իրացման, այդ թվում նաև պաշտպանության, հստակ կառուցակարգերը սահմանված են ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով:

Քննարկվող դիմում-բողոքով դիմումատուները ներկայանում են որպես հասարակական կազմակերպություն և որպես դիտորդ և ոչ թե որպես անձ, ում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը խախտվել է:

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը դիմումատուներին դիտարկել է հենց այդ կարգավիճակում՝ որպես դիտորդ կամ հասարակական կազմակերպություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների վարչաիրավական կարգով պաշտպանության կառուցակարգերը սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:»: Նշված իրավանորմի հաշվառմամբ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ի մասում ամրագրված իրավանորմով սահմանված է. «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոնշյալ իրավանորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը կիրառելի են միայն ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ի թիվս այլ առանձնահատկությունների, ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի առանձնահատկություն է սահմանված ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ եթե բողոքը կամ դիմումը չի համապատասխանում նույն հոդվածի պահանջներին, ապա դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված՝ բողոքին կամ դիմումին ներկայացվող պահանջներից է դիմումը կամ բողոքը Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սուբյեկտների կողմից ներկայացնելու պահանջը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրն առանձնացնում է սուբյեկտների հինգ խումբ, որոնց իրավունք է վերապահում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), այն է՝

1) յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ սույն օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.

2) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

3) դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

4) զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

5) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի վերլուծության արդյունքում Կենտրոնական ընտրական հանձաժողովը գտնում է, որ օրենսդիրը, ամրագրելով վերոհիշյալ սուբյեկտային կազմը՝ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը, միաժամանակ այդ իրավունքի իրացման հնարավորությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պայմանավորում է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի իրավունք է վերապահում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ դիմումատուների դատողությունն առ այն, որ «Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները», չի բխում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենսդրի կողմից ներդրված տրամաբանությունից: Հետևապես, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ դիմումատուները չեն հանդիսանում տարածքային ընտրական հանձնաժողովի դիմում-բողոքներում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտներ՝ իրավաչափ է և բխում է Ընտրական օրենսգրքի նորմերից:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածում ներդրված վերոհիշյալ տրամաբանությունն արտահայտված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածում, որը ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ կիրառելի է ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի նկատմամբ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ: Համաձայն նշված օրենքի 69-րդ հոդվածի՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը: Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ վարչական կարգով բողոք ներկայացնելու իրավունքը վերապահվում է այն անձանց, ովքեր բողոքարկման միջոցով պաշտպանում են ***իրենց*** խախտված իրավունքները:

8. Անդրադառնալով դիմումում վկայակոչված հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության հարցին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ անհիմն և առարկայազուրկ է դիմումատուների դատողությունն առ այն, որ «դիտորդական կազմակերպությունն ունի ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք և այս իրավունքի շրջանակներում ունի թե դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման և թե օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք: Դիտորդի սուբյեկտիվ իրավունքների և օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտության վերաբերյալ սույն դիմումում ներկայացված հիմնավորումները հավասարապես կիրառելի են դիտորդական կազմակերպությունների նկատմամբ:»: Նշված դատողության համար որևէ իրավական հիմք վկայակոչված չէ:

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 4-րդ և 5-րդ գլուխների իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք հանդիսանում են իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ և չեն կարող նույնացվել մեկը մյուսի հետ:

Ակնհայտ է, որ որպես դիմումատու հանդես եկող հասարակական կազմակերպությունները հանդիսանում են իրավաբանական անձինք՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ:

Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իրավաչափորեն գտել է, որ ներկայացված դիմումներով իրավաբանական անձ հանդիսացող հասարակական կազմակերպությունները դիմումներով ներկայացված իրավունքների պաշտպանությամբ

ընտրական հանձնաժողովի գործողությունը, անգործությունը կամ որոշումը բողոքարկող իրավասու սուբյեկտ չէ:

Ինչ վերաբերում է 2001 թվականի հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտած «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիային, ապա նշված կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն.

«Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, վերը բերված կետ 1-ում և 2-ում հիշատակված դիտարկման ընթացակարգերից բացի և առանց դրանք խախտելու, որ հասարակության այն ներկայացուցիչները, որոնք համապատասխանում են ազգային օրենսդրության մեջ բերված չափանիշներին, եթե այդպիսիք գոյություն ունենան, մուտք դեպի վարչական կամ դատական ընթացակարգերը՝ վիճարկելու մասնավոր անձանց կամ պետական մարմինների այն գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են շրջակա միջավայրին առնչվող ազգային օրենսդրության դրույթները»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»:

Նման պայմաններում կարևոր նշանակություն է ձեռք բերում այն իրավական հարցադրումը, թե «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը, օժտում է արդյո՞ք հասարակական կազմակերպություններին՝ սույն վեճով պայմանավորված, բողոքարկման հարցում իրավասուբյեկտությամբ:

Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպություններին նման իրավունք չի վերապահում: Համաձայն նշված իրավադրույթի յուրաքանչյուր Կողմ, այսինքն՝ պայմանագրի կողմ հանդիսացող պետություն, ապահովում է, որ հասարակության ներկայացուցիչները մուտք ունենան դեպի վարչական կամ դատական ընթացակարգերը՝ վիճարկելու մասնավոր անձանց կամ պետական մարմինների այն գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են շրջակա միջավայրին առնչվող ազգային օրենսդրության դրույթները: Այսինքն՝ տվյալ իրավադրույթը վերաբերում է կողմին՝ պետությանը, և դրանով այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ դիմելու ուղղակի իրավասություն որևէ սուբյեկտի համար սահմանված չէ: Հետևաբար, կարելի է փաստել, որ Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպություններին չի օժտում իրասուբյեկտությամբ:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2000 թվականի դեկտեմբերի 26-ի «Շրջակա միջավայրի առընչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-269 որոշման 2-րդ կետով սահմանված է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես. «...ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովել արդարադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծումը»: Այսինքն՝ նշված որոշմամբ մեկ անգամ ևս փաստվում է, որ Օրհուսի կոնվենցիան հասարակական կազմակերպություններին ուղղակի իրավասուբյեկտությամբ չի օժտում, ավելին, նշված կոնվենցիայից նման պարտավորություն ուղղակի չի բխում, քանզի պետությունը պետք է «ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովի արդարադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն»:

Մյուս կողմից հարկ է նկատել, որ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան վերաբերում է բացառապես բնապահպանական խնդիրներին, ուստիև այդ բնագավառում ծագող իրավահարաբերություններին, և նշված կոնվենցիայի իրավակարգավորումները անգամ տարածական մեկնաբանմամբ չեն կարող լինել կիրառելի ընտրական իրավահարաբերությունների նկատմամբ: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականը ևս կարող է առաջացնել պոզիտիվ պարտավորություններ պետության համար, սակայն այն չի կարող գնահատվել որպես իրավական ակտ, որն ուղղակի իրավասուբյեկտությամբ է օժտում բողոքաբերներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է նաև, որ դիմում-բողոքում վկայակոչված իրավասուբյեկտ հանդիսանալու հանգամանքի կապակցությամբ սույն որոշմամբ բերված իրավական գնահատականները համահունչ են նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և վարչական դատարանի մի շարք գործերով կայացված դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

9. Սույն դիմում-բողոքի քննարկմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017թ. ապրիլի 7-ի թիվ 11-Ա որոշումը՝ «Իրավունքի Եվրոպա միավորում», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների և դիտորդներ՝ Մարատ Կարապետյանի, Գեղամ Պետրոսյանի, Ամալյա Սարուխանյանի, Տոմա Ասատրյանի, Տիգրան Մարիտիրոսյանի, Լուսինե Հովհաննիսյանի, Աննա Գասպարյանի, Արթուր Մաթևոսյանի մասով 04.04.2017թ. դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով, իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իր որոշմամբ նշել է այն բոլոր էական փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել ընդունելու վիճարկվող որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն.

«1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 7 տարածքային հանձնաժողովը չի պահպանել ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, դիմումատու Լուսինե Բունիաթյանի մասով, և այդ մասով առկա են թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը մասով անվավեր ճանաչելու հիմքեր:

Վերոգրյալով պայմանավորված Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իր նիստում պետք է քննարկի դիմումատու՝ Լուսինե Բունիաթյանի մասով ներկայացված դիմում-բողոքը և քննության արդյունքում սահմանված կարգով կայացնի համապատասխան որոշումներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված դիմում-բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ Լուսինե Բունիաթյանի մասով, իսկ մնացած պահանջներով ենթակա են մերժման, քանզի «բ» կետով նշված պահանջը որևէ կերպ չի առնչվում դիմումատուների իրավունքներին, ինչով պայմանավորված դիմումատուներն իրավասու չեն նման պահանջով հանդես գալու: Նշված հարցադրման վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել ՀՀ վարչական դատարանը ՎԴ/0929/05/15 վարչական գործի շրջանակներում կայացված որոշմամբ.

«... Դատարանը վերևում արդեն անդրադարձել է դիտորդների իրավունքներին, որոնք չեն ներառում նաև հանրային իրավախախտում թույլ տրված անձանց պատասխանատվության հարցով իրավասու մարմիններին դիմելու իրավունքը: Ինչպես նշվեց վերը, դիտորդներն ընդամենը ներկայացնում են իրենց դիտարկումները ընտրախախտումների վերաբերյալ, իսկ

դրանց հետագա գնահատումն ու ընթացքը դուրս է նրանց վերահսկողության շրջանակներից: Ըստ այդմ, դատարանն արձանագրում է, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը չի կարող պահանջել իրավասու ընտրական հանձնաժողովից համապատասխան գործողություններ՝ կապված վարչական կամ քրեական իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման հետ:» (27.04.2015թ. ՎԴ/0929/05/15):

Դիմում-բողոքով ներկայացված 3-րդ պահանջը նույնպես ենթակա է մերժման, քանի որ դիմումի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումն ըստ ենթակայության վերահասցեագրման հիմքեր առկա չեն:

Դիմում-բողոքով ներկայացված 4-րդ պահանջը նույնպես ենթակա է մերժման, քանի որ բողոքաբերները ներկայացրած դիմում-բողոքով բողոքարկում են Ազգային ժողովի 02.04.2017թ. ընտրությունների քվեարկության օրվա ընթացքում տեղի ունեցած առանձին միջադեպեր, այն դեպքում, երբ և ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացը, և այդ գործընթացում տեղ գտած հնարավոր օրինախախտումների ու դրանցով պայմանավորված վիճահարույց խնդիրների լուծման համար օրենսդրությամբ նախատեսված բացահայտման, գնահատման ու վերացման կոնկրետ ընթացակարգերի կիրառման իրավական հնարավորությունները՝ հստակ ժամկետներով և համապատասխան իրավասուբյեկտների իրավասություններով, վերջնականապես ավարտված են, ինչ վերաբերում է պահանջին՝ անվավեր ճանաչել Ազգային ժողովի ընտրությունները և նշանակել վերաքվեարկություն, ապա հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 13-րդ մասը, ըստ որի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում իրավունք ունեն ներկայացնելու կուսակցությունը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն, և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ, դիմում-բողոքը՝ սույն պահանջի մասով, չի քննարկվում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Արամ Գալստյանի մասով դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժել:
2. Լուսինե Բունիաթյանի մասով՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 7-ի թիվ 11-Ա որոշումը՝ ճանաչել անվավեր:
3. «Իրավունքի Եվրոպա միավորում», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների և դիտորդներ՝ Մարատ Կարապետյանի, Գեղամ Պետրոսյանի, Ամալյա Սարուխանյանի, Տոմա Ասատրյանի, Տիգրան Մարիտիրոսյանի, Լուսինե Հովհաննիսյանի, Աննա Գասպարյանի, Արթուր Մաթևոսյանի մասով դիմում-բողոքը մերժել՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 7-ի թիվ 11-Ա որոշումը թողնել անփոփոխ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. Մուկուչյան**